ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ
ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT OF THE REPUBLIC OF ARMENIA
«SERVICE FOR THE PROTECTION OF HISTORICAL ENVIRONMENT AND CULTURAL MUSEUM RESERVATIONS»
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
"СЛУЖБА ПО ОХРАНЕ ИСТОРИЧЕСКОЙ СРЕДЫ И ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ МУЗЕЕВ-ЗАПОВЕДНИКОВ"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ

«02» մայիսի 2022թ. N 1-309

«ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊԸ -ի
տնօրեն Տ. Մխոյանին
ք.Երևան, Գ.Աղաբաբյան փող.1/26
հեռ. +374 55 60-09-60

Հարգելի պարոն Մխոյան,

Տեղեկացվում է, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ ՊՈԱԿ/ և «ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ կազմակերպություն/ միջև 2022 թվականի մարտի 17-ին կնքված N ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-22/4-2 ծածկագրով պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ 1.1 կետի համաձայն կազմակերպությունը պարտավորվել է ՊՈԱԿ-ին մատուցել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /այսուհետ՝ ծառայություններ/: Պայմանագրի N 1 հավելվածի համաձայն ծառայությունը մատուցվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց օրվանից հաշված մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը՝ յուրաքանչյուր դեպքում ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 20 օրվա ընթացքում:

Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի համաձայն, Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հայտնում եմ Ձեզ, որ ՊՈԱԿ-ի տնօրենի 2022 թվականի մարտի 17-ի թիվ 1-190 գրությամբ դիմել ենք կազմակերպությանը 409 SS 60 պետհամարանիշի ավտոմեքենայի ընթացիկ նորոգման աշխատանքներ կազմակերպելու նպատակով, սակայն 2022 թվականի մայիսի 02-ի դրությամբ կազմակերպության կողմից ծառայությունները մատուցված չեն: ՊՈԱԿ-ի տնօրենի 2022 թվականի 23-ի թիվ 1-202 գրությամբ դիմել ենք 523 SS 60 պետհամարանիշի ավտոմեքենայի համար սակայն 2022 թվականի մայիսի 02-ի դրությամբ կազմակերպության կողմից ծառայությունները մատուցված չեն:

Հաշվի առնելով, որ կազմակերպության կողմից վերը նշված ավտոմեքենաների սպասարկման նպատակով պայմանագրով սահմանված ժամկետում որևիցե գործողություն իրականացված չէ և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը և 7.9 կետը ծանուցում եմ, որ ՊՈԱԿ-ը 2022 թվականի մայիսի 03-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը:

Հարգանքով՝

Տնօրենի պարտականությունները կատարող Ա.Հովհաննիսյան